12/08/2003

համար 279

# ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժբ» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և ելնելով Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների ներդրման աշխատանքների կատարելագործման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Վարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությանը՝ սույն որոշման ընդունումից հետո տասնօրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ «Վարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները» հաստատելու առաջարկով:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տ. Սարգսյան**

2003 թ. օգոստոսի 19
Երևան

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նախարարի 2003 թվականի օգոստոսի 12-ի -----------------------
թիվ 279 Ն որոշմամբ հրամանով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի 2003 թվականի -------
թիվ --------------------------

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝**

**------------------------ Տ. Սարգսյան**

**----- ---------------- 2003 թ.**

# ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

## ԲԱԺԻՆ I
## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 . Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ վարկային կազմակերպություններ) հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերն ու դրանց լրացման ցուցումները:

### Գլուխ 2. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 . Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակումն իրականացվում է «Վարկային կազմակերպություններՌ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածների պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման թիվ 1 և 30 ստանդարտների (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) սկզբունքների համաձայն:

2.2. Վարկային կազմակերպությունների կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝
ա) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը՝ ձև 1 (ենթահավելված 1),
բ ) հաշվապահական հաշվեկշիռը՝ ձև 2 (ենթահավելված2),
գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը՝ ձև 3 (ենթահավելված 3),

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը՝ ձև 4 (ենթահավելված 4),

ե) ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ձև 5 (ենթահավելված 5):

2.3 . Վարկային կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունների հետ միասին պետք է հրապարակի աուդիտորական եզրակացությունը:

2.4 . Ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում վարկային կազմակերպությունը պետք է հրապարակի համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Վարկային կազմակերպությունը կարող է հրապարակել նաև առանձին ֆինանսական հաշվետվությունները:

2.5 . Վարկային կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են ավելի մանրամասնել ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց կից ծանոթագրությունները՝ պահպանելով ՀՀՀՀՄ-ների պահանջները և ներկայացման պարտադիր հոդվածները:

2.6 . Վարկային կազմակերպությունները նախորդ տարվա էական սխալները, որոնք բացահայտվել են հաշվետու ժամանակաշրջանում, պետք է ճշգրտեն ՀՀՀՀՄ 8-ի համաձայն:

2.7 . Վարկային կազմակերպությունները հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերը, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին, պետք է բացահայտեն ՀՀՀՀՄ 10-ի համաձայն: Վարկային կազմակերպությունները պետք է ներկայացնեն նաև ֆինանսական հաշվետվությունների վավերացման օրը և այն, թե ում կողմից են վերջիններս վավերացվել:

2.8 . Հաշվետությունների համապատասխան հոդվածները մանրամասնվում են ծանոթագրություններում՝ ըստ դրանց էականության:

### Գլուխ 3. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**3.1** . «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարկային կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի համար պետք է հրապարակեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ, որը ներառում է՝

ա) ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն՝ ձև 6 (ենթահավելված 6),

բ) միջանկյալ հաշվապահական հաշվեկշիռ՝ ձև 7 (ենթահավելված 7),

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվությունը՝ ձև 8 (ենթահավելված 8),

դ) դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն՝ ձև 9 (ենթահավելված 9):

3.2. ՀՀՀՀՄ 34-ի համաձայն՝ վարկային կազմակերպությունները միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, անհրաժեշտության դեպքում, կարող են ներկայացնել ընտրված բացատրական ծանոթագրություններ:

3.3. Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պետք է հրապարակվեն ՀՀՀՀՄ 34-ով սահմանված ժամանակաշրջաններին համապատասխան:

3.4. Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պետք է կիրառվի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

# Բաժին II
# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԻ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

### Գլուխ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 . Վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն նրա բոլոր տարածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:
4.2 . Հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
4.3 . Նոր ստեղծված վարկային կազմակերպության համար առաջին հաշվետու տարի (ժամանակաշրջան) է համարվում նրա պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
4.4 . Լուծարվող վարկային կազմակերպությունը ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ տարե-սկզբից մինչև սահմանված կարգով լուծարման գործընթացի սկիզբն ընկած ժամանակաշրջանի համար:
4.5 . Ֆինանսական հաշվետվությունները պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

ա) անվանումը,

բ) հաշվետու ամսաթիվը կամ ժամանակաշրջանը, որի համար կազմված է հաշվետվությունը,

գ) կազմակերպության անվանումը,

դ) գտնվելու վայրը,

ե) թվային ցուցանիշների ներկայացման չափսը (ֆորմատը),

զ) պատասխանատու անձանց ստորագրությունը:

## Գլուխ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 1)

5.1. Ֆինանսական արդյունքների մասին տարեկան հաշվետվության 3-րդ և 4-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի տվյալները: Միջանկյալ հաշվետվությունում, 2-րդ սյունակում, լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը, 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի տվյալները՝ աճողական կարգով, 5-րդ սյունակում՝ նախորդ տարվա նույն համեմատական տվյալները:
5.2. Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հաշվետվության և դրան համապատասխան կից ծանոթագրությունների հոդվածներում ներառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվները:

| **Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հոդվածները** | **Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ** | **Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներ** |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ (ծան. 3) | Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից | 601 ենթաբաժնի հաշիվներ |
| | Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից | 6021, 6022, 6023 և 6024, 6025 (միայն բանկերի և այլ ֆինանսական |

| | | |
|---|---|---|
| | | կազմակերպությունների գծով) 603, ենթաբաժնի հաշիվներ |
| | Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխատվություններից | 6024, 6025 (միայն հաճախորդների գծով), 604, 605, 606, |
| | Տոկոսային եկամուտներ ներդրումներից | 607 ենթաբաժնի հաշիվներ |
| | Այլ տոկոսային եկամուտներ | 608, 609 ենթաբաժնի հաշիվներ |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր (ծան. 4) | Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց | 701,707, 708 (միայն բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գծով) ենթաբաժնի հաշիվներ |
| | Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց | 702;703,704;705,708 (միայն հաճախորդների գծով) ենթաբաժնի հաշիվներ |
| | Այլ տոկոսային ծախսեր | 706,709 ենթաբաժնի հաշիվներ |
| Շահաբաժնի տեսքով եկամուտներ | | 610 ենթաբաժնի հաշիվներ |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | | 631 ենթաբաժնի հաշիվներ |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | | 7311,7312 հաշիվներ |
| Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) (ծան. 5) | Առևտրային նպատակներով պահվող ներդրումների վաճառքից զուտ շահույթ/ (վնաս) | 6422,7513 հաշիվներ |
| | Առևտրային նպատակներով պահվող ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/ (վնաս) | 6428,7516 հաշիվներ |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/ (վաս) (ծան. 6) | Վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/ (վնաս) | 6423,7514 հաշիվներ |
| | Վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/ (վնաս) | 6429,7517 հաշիվներ |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) | | 6424,7515 հաշիվներ |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս) (ծան. 7) | Արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ/ (վնաս) | 6425,7518 հաշիվներ |
| | Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ/ (վնաս) | 6426,7519 հաշիվներ |
| Այլ գործառնական եկամուտներ (ծան. 8) | Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից | 6411 հաշիվ |
| | Ֆակտորինգից ստացված եկամուտներ | 6414 հաշիվ |
| | Արտասովոր եկամուտներ | 651 ենթաբաժնի հաշիվ |
| | Այլ եկամուտներ | 6412,6419,6421,6427,6430,6431, 6432,661,671 ենթաբաժնի հաշիվներ |
| Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ (ծան. | | 621,721 ենթաբաժնի հաշիվներ |

9)

| | | |
|---|---|---|
| Ընդհանուր վարչական ծախսեր (ծան. 10) | Ծախսեր՝ անձնակազմի գծով | 741 ենթաբաժնի հաշիվներ |
| | Կառավարչական ծախսեր | 742;743 ենթաբաժնի հաշիվներ |
| Այլ գործառնական ծախսեր (ծան. 11) | Վճարված տույժեր և տուգանքներ | 7313 հաշիվ |
| | Գովազդային և ներկայացուցչական ծախսեր | 744 ենթաբաժնի հաշիվներ |
| | Ֆակտորինգի գծով ծախս | 7315 |
| | Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր | 745,746 ենթաբաժնի հաշիվներ |
| | Արտասովոր ծախսեր | 753 ենթաբաժնի հաշիվներ |
| | Այլ ծախսեր | 7314,7316,7511,7512,7520.,7521 ,7522,7523,7524,7525,7526 771 ենթաբաժնի հաշիվներ |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) (ծան. 12) | | 761 ենթաբաժնի հաշիվներ |

## Գլուխ 6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (Ձև 2)

**6.1** . Տարեկան հաշվապահական հաշվեկշռի 3-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդ ժամանակաշրջանի տվյալները: Միջանկյալ հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, 3-րդում՝ նախորդ տարվա վերջի տվյալները:

6.2. Կից աղյուսակում ներկայացված են հաշվետվության և դրան համապատասխան կից ծանոթագրության հոդվածներում ներառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվները:

| **Հաշվետվության հոդվածներ** | **Հոդվածի վերաբերյալ հաշվետվություններին կից ծանոթագրություններ** | **Հաշվապահական հաշվառման հաշվային պլանում ներառվող հաշիվներ** |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ (ծան. 13) | Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր | 101 ենթաբաժնի հաշիվներ |
| | Բանկային հաշիվներ բանկերում | 1021,1023,1025,1026 հաշիվներ |
| | Տեղաբաշխված բանկային հաշիվներ և այլ ավանդների գծով պահուստ | 184 ենթաբանի հաշիվներ |
| Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ (ծան. 14) | Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր | 1111,1112,1114,1151,1153,1155, 1157,1160 (միայն ՀՀ պետական արժեթղթերի գծով) |
| | Այլ երկրների պետական արժեթղթեր | 1131,1132,1134,1152,1154,1156, 1158,1159,1160 (միայն այլ երկրների պետական արժեթղթերի գծով) |
| | Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերի գծով | 1121,1122,1123,1124,1125,1127, 1128,1152,1154,1156,1158,1159, 1160 (միայն ՀՀ ոչ պետական արժեթղթերի գծով) |
| | Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր | 1141,1142,1143,1144,1145,1147, 1148,1152,1154,1156,1158,1159, |

| | | |
|---|---|---|
| | | 1160 (միայն այլ երկրների ոչ պետական արժեթղթերի գծով) |
| | Ածանցյալ գործիքներ | 117 ենթաբաժնի հաշիվներ |
| | Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | 116 ենթաբաժնի հաշիվներ |
| | Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | 184 ենթաբաժնի հաշիվներ |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ (ծան. 15) | Բանկերում ներդրված ավանդներ | 1211,1212,1213,12114 հաշիվներ |
| | Բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 1221,1223,1241,1242,1311,1313 հաշիվներ |
| | Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ | 157 ենթաբաժնի հաշիվներ |
| Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ (ծան. 16) | Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ | 1217, 1218 հաշիվներ |
| | Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 1231,1233,1235, 1243, 1315,1317,1319, հաշիվներ |
| | Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ | 157 ենթաբաժնի հաշիվներ |
| Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ (ծան. 17) | Տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ | 1321,1322,1323,1325,1327,1329, 1331,1333,1510,1511,1513,1515, 1516,1518,1521,1522,1523,1525, 1527,1528,1529,1531,1541,1543, 1545,1547,1551.1553,1561,1563, 1565,1567 հաշիվներ |
| | Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ | 157 ենթաբաժնի հաշիվներ |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներ (ծան. 18) | Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր | 1411,1412,1414 հաշիվներ |
| | Այլ երկրների պետական արժեթղթեր | 1431,1432,1434 հաշիվներ |
| | Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր | 1421,1422,1423,1424,1425,1426, 1428 հաշիվներ |
| | Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր | 1441,1442,1443,1444,1445,1446, 1448 հաշիվներ |
| | Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | 145 ենթաբաժնի հաշիվներ |
| | Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | 184 ենթաբաժնի հաշիվներ |
| Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ (ծան. 19) | Ստացվելիք շահաբաժիններ | 167,168 ենթաբաժնի հաշիվներ |
| | Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով | 169 ենթաբաժնի հաշիվներ |

| | | |
|---|---|---|
| | ստացվելիք գումարներ | |
| | Երաշխիքներ | 162;163 ենթաբաժնի հաշիվներ |
| | Հեջավորման ածանցյալ գործիքներ | 171 ենթաբաժնի հաշիվներ |
| | Ստացվելիք այլ գումարներ | 170 ենթաբաժնի հաշիվներ |
| | Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | 184 ենթաբաժնի հաշիվներ |
| Վարձակալության գծով ստացվելիք գումարներ (ծան. 20) | Վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 165;166 ենթաբաժնի հաշիվներ |
| | Չստացված ֆինանսական եկամուտներ ֆինանսական վարձակալությունից | 411 և 412 ենթաբաժնի հաշիվներ |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ (ծան.21) | Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր | 1911,1912,1913,1914,1915 հաշիվներ |
| | Այլ երկրների պետական արժեթղթեր | 1931,1932,1933,1934,1935 հաշիվներ |
| | Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր | 1921,1922,1923,1924,1925 հաշիվներ |
| | Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր | 1941,1942,1943,1944,1945 հաշիվներ |
| | Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | 195;196;197 ենթաբաժնի հաշիվներ |
| | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ (այդ թվում` ֆակտորինգ) | 198, 184 (միայն ֆակտորինգի գծով) ենթաբաժնի հաշիվներ |
| Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում | | 201;202,203;204 ենթաբաժնի հաշիվներ |
| Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում | | 211,212 ենթաբաժնի հաշիվներ |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ (ծան. 22) | | 231,232,221,222,241,251,252 ենթաբաժնի հաշիվներ |
| Ստացվելիք տոկոսներ (ծան. 23) | Հաշվեգրված տոկոսներ | 1022,1024,1025,1027,1113,1126, 1133,1146,1215,1216,1219,1222, 1224,1232,1234,1236,1312,1314, 1316,1318,1320,1324,1326,1328, 1330,1332,1334,1413,1427,1433, 1447,1512,1514,1517,1519,1524, 1526,1530,1532,1542,1544,1546, 1548,1552,1554,1562,1564,1566, 1568,1916,1926,1936,1946,1953, 1956,1959,1964,1967,1970,1973 |
| | Չճանաչված տոկոսային եկամուտներ | 158 ենթաբաժնի հաշիվներ |
| Այլ ակտիվներ (ծան. 24) | Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 181,182,183 ենթաբաժնի հաշիվներ |
| | Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | 184 ենթաբաժնի հաշիվներ |
| | Հետաձգված հարկային | 2713 հաշիվ |

| | | |
|---|---|---|
| | ակտիվ | |
| | Արագամաշ առարկաներ | 261 ենթաբաժնի հաշիվներ |
| | Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր | 164 ենթաբաժնի հաշիվներ |
| | Այլ ակտիվներ | 2711,2712,2714,2715,2716 հաշիվներ |
| Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր (ծան. 25) | Բանկերից ներգրաված փոխառություններ | 3011,3013,3015,3017 հաշիվներ |
| | Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ | 3021,3023,3025,3027,3141,3143 |
| Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ (ծան. 26) | Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ | 3111,3113,3115,3117,3119,3121 հաշիվներ |
| | Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառություններ | 3131,3133,3135,3137,3145,3147, 3149 հաշիվներ |
| Հաճախորդներից ներգրաված փոխառություններ (ծան. 27) | Ներգրավված ցպահանջ փոխառություններ | 3211,3212,3213,3215,3216,3217, 3219,3221,3223,3225,3227,3229, 3231 հաշիվներ |
| | Ներգրավված ժամկետային փոխառություններ | 3241,3243,3245,3246,3247,3249, 3251,3253,3255,3257,3259,3261 հաշիվներ |
| | Ռեպո համաձայնագրեր հաճախորդների հետ | 3151,3152,3153,3155,3157,3159, 3161,3162,3164 հաշիվներ |
| Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ | | 331,332 ենթաբաժնի հաշիվներ |
| Վարձակալության գծով վճարվելիք գումարներ | | 3541,3543 հաշիվներ |
| Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր (ծան. 28) | Առանց տոկոսի արժեթղթեր | 341 ենթաբաժնի հաշիվներ |
| | Տոկոսային արժեթղթեր | 3421,3422,3423 հաշիվներ |
| | Թողարկված այլ արժեթղթեր | 3431,3441 հաշիվներ |
| Պահուստներ | | 401 ենթաբաժնի հաշիվներ |
| Վճարվելիք գումարներ (ծան. 29) | Վճարման ենթակա շահաբաժիններ | 351 ենթաբաժնի հաշիվներ |
| | Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 353 ենթաբաժնի հաշիվներ |
| | Այլ վճարվելիք գումարներ | 352 ենթաբաժնի հաշիվներ |
| Վճարվելիք տոկոսներ | | 3012,3014,3016,3018,3022,3024, 3026,3028,3112,3114,3116,3118, 3120,3122,3132,3134,3136,3138, 3142,3144,3146,3148,3150,3154, 3156,3158,3160,3163,3165,3212, 3214,3218,3220,3222,3224,3226, 3228,3230,3232,3242,3244,3248, 3250,3252,3254,3256,3258,3260, 3262,3312,3322,3424,3442,3542, 3544,3552,3554 հաշիվներ |
| Այլ պարտավորություններ (ծան. 30) | Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով | 361 ենթաբաժնի հաշիվներ |
| | Կրեդիտորական պարտքեր և | 372,373 ենթաբաժնի հաշիվներ |

| | | |
|---|---|---|
| | տարանցիկ հաշիվներ | |
| | Հետաձգված հարկային պարտավորություններ | 381 ենթաբաժնի հաշիվ |
| | Այլ պարտավորություններ | 3551,3553,3911 հաշիվներ |
| Կանոնադրական կապիտալ | | 501,502,503,504,521, ենթաբաժնի հաշիվներ |
| Գլխավոր պահուստ | | 511 ենթաբաժնի հաշիվ |
| Վերագնահատման պահուստներ | | 512;513 ենթաբաժնի հաշիվներ |
| Կուտակված շահույթ (վնաս) | | 531,532 ենթաբաժնի հաշիվներ |

## Գլուխ 7. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 3)

7.1 . Սեփական կապիտալի մասին տարեկան հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակներից: I աղյուսակում ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող տվյալները, իսկ II աղյուսակում` հաշվետու ժամանակաշրջանի տվյալները: Վարկային կազմակերպության սեփական կապիտալի մասին միջանկյալ հաշվետվության I և II աղյուսակներում ցույց են տրվում, համապատասխանաբար, ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը և նախորդ տարվա մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի տվյալները:

7.2 . «Մնացորդը առ 31 դեկտ. -----թ.» տողում ըստ սյունակների լրացվում է նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ`

ա) կանոնադրական կապիտալի մնացորդը,
բ ) գլխավոր պահուստի մնացորդը,
գ) վերագնահատման պահուստի մնացորդը,
դ) կուտակված շահույթի մնացորդը:

7.3. «Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը» տողի «Կուտակված շահույթ» սյունակում ցույց է տրվում ՀՀՀՀՍ 8-ի «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի հիմնական մոտեցման համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության և հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիներին վերաբերող էական սխալների ուղղման հետևանքով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտման գումարը: Նույն գումարը գրվում է «Ընդամենը» սյունակում: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում:

7.4. «Վերահաշվարկված մնացորդ» տողի «Կուտակված շահույթ» սյունակում գրվում է «Մնացորդը առ 31 դեկտ.------ թ.» տողի «Կուտակված շահույթ» սյունակի և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և «Էական սխալների ճշգրտում» տողի «Կուտակված շահույթ» սյունակի տվյալների հանրագումարը կամ տարբերությունը: Մնացած սյունակներում լրացվում են «Մնացորդ առ 31 դեկտ.------- թ.» տողի տվյալները:

7.5. «Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և վնասներ» տողում լրացվում են ակտիվների վերագնահատումից առաջացած տարբերությունները: Այդ տարբերությունները գրվում են «Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և վնասներ» տողի «Վերագնահատման պահուստ» սյունակում:

7.6. «Ներդրումներ կանոնադրական կապիտալում» տողում լրացվում են բաժնետերերի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրումների գումարները: Այդ գումարները գրվում են «Ներդրումներ կանոնադրական կապիտալի» տողի «Կանոնադրական կապիտալ» սյունակում:

7.7. «Շահաբաժիններ» տողում լրացվում են վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին վճարված շահաբաժինների գումարները: Այդ գումարները գրվում են «Շահաբաժիններ» տողի «Կուտակված շահույթ» սյունակում:
7.8. «Զուտ շահույթ/վնաս» տողում լրացվում է բանկի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ստացված զուտ շահույթը: Այդ գումարը գրվում է այս տողի «Կուտակված շահույթ» սյունակում:
7.9. «Մնացորդ առ------- » տողում գրվում են բոլոր տողերի համապատասխան սյունակների տարբերությունները կամ գումարները համապատասխան ամսաթվի դրությամբ:

## Գլուխ 8. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 4)

8.1. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով, ըստ որի՝ ցույց են տրվում համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական տեսակները: Այն արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում վարկային կազմակերպության դրամարկղում և հաշիվներում գոր-ծառ-նական, ներդրումային, ֆինանսական գործու-նեությունից (ներառյալ՝ արտասովոր դեպքերից) Հա-յաստանի Հան-րապետու-թյան արժույթի և արտարժույթի, դրա-մա-կան միջոց-նե-րի համարժեքների (այսուհետ՝ դրամա-կան միջոցներ) մուտքերը և ելքերը, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբե-րու-թյունների հե-տևան-քով դրա-մա-կան միջոցների և դրամական միջոցների համարժեքների աճը կամ նվազումը:
8.2. «Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից» բաժնում արտացոլվում են վարկային կազմակերպության հիմնական գործունեության, ինչպես նաև այլ գործունեության, բացառությամբ՝ ներդրումային և ֆինանսական գործունեությունների հետ կապված դրամական միջոցների զուտ հոսքերը:
8.3. «Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից» բաժնում արտացոլվում են երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումից առաջացած զուտ հոսքերը, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ:
8.4. «Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից» բաժնում արտացոլվում են այն գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը, որոնց հետևանքով տեղի են ունենում վարկային կազմակերպության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխությունները:
8.5. Դրամական միջոցների հոսքերը, որոնք առաջացել են արտարժույթով կատարված գործառնությունների հետևանքով, պետք է գրանցվեն բանկի հաշվետվական արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի և արտարժույթի միջև դրամական միջոցների հոսքերի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը:
8.6. Դրամական հոսքերի տարեկան հաշվետվության 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, նախորդ և հաշվետու ժամանակաշրջանների տվյալները: Եթե վարկային կազմակերպությունը կազմում է միջանկյալ հաշվետվություն, ապա 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը և նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի տվյալները:
8.7. «Ստացված տոկոսներ» տողում ցույց են տրվում բանկային հաշիվների, ներդրված ավանդների, տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի, ակրեդիտիվների,

ներդրումների և այլ գործառնությունների դիմաց փաստացի ստացված տոկոսային եկամուտները:
8.8. «Վճարված տոկոսներ» տողում ցույց են տրվում ներգրավված փոխառությունների, ստացված վարկերի, ռեպո համաձայնագրերի և այլ պարտավորությունների դիմաց վարկային կազմակերպության կողմից վճարված տոկոսային ծախսերը:
8.9. «Կորուստների վերականգնում» տողում ցույց է տրվում անհուսալի ճանաչված վարկերի, դեբիտորական պարտքերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վերականգնումից առաջացած դրամական միջոցների ներհոսքը:
8.10. «Ստացված շահաբաժիններ» տողում ցույց են տրվում ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորներում, դուստր կազմակերպություններում կատարված ներդրումների դիմաց ստացված շահաբաժինները:
8.11. «Ստացված զուտ կոմիսիոն գումարներ» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների և այլ կազմակերպության կողմից վարկային կազմակերպությանը մատուցված ծառությունների դիմաց ստացված զուտ գումարները:
8.12. «Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից իր աշխատողներին վճարված գումարները և դրան հավասարեցված այլ վճարումները:
8.13. «Վճարված հարկեր» տողում ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում վճարված հարկերը:
8.14. «Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից կազմակերպություններին և հաճախորդներին տրամադրված վարկերի, ներդրված ավանդների և ռեպո համաձայնագրերի, ինչպես նաև դրանց վերադարձի գումարները:
8.15. «Ներգրավված միջոցների ավելացում (նվազում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից հաճախորդներից ներգրավված միջոցների, ռեպո համաձայնագրերի, ինչպես նաև դրանց մարման զուտ գումարները:
8.16. «Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի (այդ թվում՝ ֆակտորինգի գծով) նվազման և ավելացման դիմաց ստացված գումարները:
8.17. «Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում վարձատուի կողմից տրամադրված ակտիվի դիմաց ստացված գումարները:
8.18. «Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից» տողում ցույց են տրվում հավատարմագրային կառավարման, երաշխիքներով և հոժարագրերով, ակրեդիտիվներով, չեկերով և այլ հաշվարկային փաստաթղթերով գործառնությունները (դրանց իրականացման նպատակով դեպոնացված/ սառեցված գումարները, զուտ եկամուտները, ռեպո համաձայնագրերի վերավաճառքից ստացված զուտ գումարները), արագամաշ առարկաների ձեռքբերում/ օտարումը, ավանդների ապահովագրումը, տույժերի, տուգանքների, կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսումները և գործառնական գործունեություն հանդիսացող այլ գործառնությունները ու դրանցից ստացվող զուտ գումարները:
8.19. «Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի (այդ թվում՝ ֆակտորինգի գծով) նվազումից և ավելացումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

8.20. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորներում, դուստր կազմակերպություններում ներդրումների նվազումից և ավելացումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.21. «Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից հիմնական միջոցներում, ոչ նյութական ակտիվներում, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների միջոցով առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.22. «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում» տողում ցույց է տրվում վարկային կազմակերպության կողմից հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար վճարված դրամական միջոցների արտահոսքը:
8.23. «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում» տողում ցույց է տրվում վարկային կազմակերպության կողմից հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից առաջացած դրամական միջոցների ներհոսքը:
8.24. «Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից» տողում ցույց են տրվում կանոնադրական կապիտալի համալրման հաշվում դրամական միջոցների կուտակումը, բռնագանձված գրավի ձեռքբերում/օտարում, ներդրումային գործառնություն հանդիսացող այլ գործառնություններից առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.25. «Վճարված շահաբաժիններ» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին վճարված շահաբաժինների գումարները:
8.26. «Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպությանը բանկերից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.27. «Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպությանը այլ ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.28. «Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց ստացված դրամական միջոցների հոսքերը:
8.29. «Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում» տողում ցույց են տրվում կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումներից առաջացած դրամական միջոցների հոսքերը:
8.30. «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարները» տողում ցույց են տրվում վարձակալի կողմից ստացված ակտիվի դիմաց վճարված գումարները:
8.31. «Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության կողմից սեփական բաժնետոմսերի հետգնման համար վճարված գումարները, կանոնադրական կապիտալի համալրման համար միջոցների ներգրավումը և ֆինանսական գործունեություն հանդիսացող այլ գործառնությունների դիմաց դրամական միջոցների հոսքերը:
